

ՀՀ Սյունիքի մարզպետի ուղերձը Եվրոպայի Հայկական Միությունների Ֆորումում

Մեծ Եղեռնի զոհերի հիշատակի միջոցառման հարգելի մասնակիցներ,
Մեծարգո տիկնայք և տիարք,

Ողջունում եմ Էկոմունիկ պատարագի կազմակերպիչներին, Հայկական Միությունների Ֆորումին և նրա նախագահ դոկտոր Աշոտ Գրիգորյանին.

Մեր շնորհակալության և երախտագիտության խոսքն ենք հղում բոլոր մասնակիցներին՝

թեմական առաջնորդներին,
դեսպաններին,
հասարակական գործիչներին,
քաղաքական գործիչներին

Եվրոպայի հայությանը՝ մեր սուրբ նահատակների հիշատակը հավերժացնելու միջոցառմանը մասնակցելու համար:

Մենք երախտապարտ ենք, որ գրեթե 100 տարի անց, դուք՝ հին աշխարհամասի եկեղեցական, հասարակական, քաղաքական գործիչներդ, Եվրոպայում Հայկական Միությունների Ֆորումի հետ մեկտեղ, համախմբված ու միակամ, ոգեկոչելու եք Հայոց ցեղասպանության 96-րդ տարելիցը, 1.5 միլիոն անմեղ զոհերի հիշատակը՝ ցույց տալով աշխարհին, որ հայը, չնայած ցեղասպանություն վերապրած ու աշխարհով մեկ սփռված, բայց իր ինքնությունն ու անունը պահած, իր պետականության ամրապնդման ջատագովն ու իր պապենական հողի վրա վերստին ապրելու անբեկանելի կամքի տերն է:

Այսօր մենք ձեզ հետ միասին գլուխ ենք խոնարհում հայոց ցեղասպանության սուրբ նահատակների հիշատակի առջև և շնորհակալություն հայտնում ձեզ՝ մեր ցավը կիսելու, պատմական ճշմարտությունը վերհանելու, Հայոց ցեղասպանությունը դատապարտելու և այն պաշտոնապես ճանաչելու ձեր զորակցության համար:

Սուրբ Զատիկի նախաշեմին ցանկանում եմ ձեզ առողջություն, անկոտրում կամք ու կորով և հաջողություններ՝ Աստվածահաճո ձեր բոլոր նախաձեռնություններում:

Հարգանքներով՝
Հայաստանի Հանրապետության
Սյունիքի մարզպետ

Սուրիկ Խաչատրյան

18.04.2011թ